

Ա.

ՄԻՋԱԳԻԻՂ

Նախ եւ առաջ հարկ է գիտնալ, որ այս գիւղը մտնելու համար քանի մը դժուարութիւններ կան – խօսքս պատուաւոր մարդերու համար է եւ ո՛չ գողերու համար – իսկ անկէ ելնելու համար դժուարութիւններն աւելի մեծ են. արեւելեան խնդրոյն ձեռով շինուած գիւղ մ'է: Եթէ նաւամատոյցին ճամբայէն մտնել ուզես՝ վեց հոյակապ ճեմիշներու հոտը քթիդ ուշադրութիւնը կգրաւեն, եւ անմիջապէս կը համոզուիս, որ Միջագիւղ բնակողի մը համար պզտիկ քիթ մը մեծ փորձանք է: Եթէ լերան կողմէ իջնել փորձես՝ փրկանքդ հետդ տանելու ես, որ եթէ գողերէ բռնուիս՝ կարենաս օձիքդ ազատել: Իսկ եթէ Պէշկիթաշի կողմէն գաս՝ աչերդ թաշկինակով մը կապելու ես, որ հովն անցեալ տարուան հրդեհէն մնացած մոխիրներն աչերուդ չփչէ: Այս գիւղին մէջ մտնելու ապահով ճամբան օդապարիկով հոն իջնելն է, կ'ըսեն, իսկ ինձի համար հոն մտնելու ամենէն ապահով ճամբան հոն բնաւ չմտնելն է:

Այս գիւղին մէջ հինգ հարիւր քսան տուն կայ հայու. սակայն ասոնց մէջ կան տուներ, որք երկու եւ երեք ընտանիքներէ բնակուած են: Եթէ գործերն այսպէս շարունակուին՝ քսան ընտանիք մէկ տան մէջ պիտի բնակին եւ վիճակագիրները տուն համրելու տեղ սենեակ պիտի համրեն:

Երկու եկեղեցի կայ. միոյն անուն Աստուածածին է, իսկ միւսինը Լուսաւորիչ: Գիւղիս Աստուածածինը սահմանադրական չէ, ամեն այցելուները միեւնոյն եղանակով չընդունիր. հարուստ այցելու մը տաճարէն ներս մտնելուն պէս՝ ժամակոչ եղբայրները իրար կ'անցնին այթոռ մը գտնելու եւ հիւրին քովը դնելու համար. իսկ երբ այցելուն աղքատ է՝ հրաման կ'ընդունի գետնի վրայ աղօթելու: Հարուստները Ս. Զատկին կամ Ծնունդին միայն կու գան եկեղեցին, եւ շատ անգամ ալ անձամբ չկրնալով ներկայ գտնուիլ՝ իրենց այցետոմսը կորկեն եկեղեցին:

Այս եկեղեցւոյն վերնատունէն ամեն տարի տեղ կծախուի կամ վարձու կտրուի – թէպէտեւ լրագիրներու մէջ ծանուցում չըլլար. – արդէն հարուստ տիկիները ամբողջ վերնատունը ծախու առած են, եւ տօնի օրերը մէյ - մէկ պահապան կնիկ կորկեն հոն, որպէս զի իրենց տեղը պաշտպանեն օտար կիներու յարձակումներու դէմ: Արդեօք ժամանա՞կն է յիշել Աւետարանին այս խօսքը. *Տուն իմ տուն աղօթից կոչեցի, եւ դուք արարիք զսա այրս աւագակաց*: Լուսաւորիչը ժողովրդական է, այր եւ կին՝ խառն կմտնեն տաճարն, բայց Լուսաւորիչն, այրերուն վրայ վստահութիւն